ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 օգոստոսի 2023թ. թիվ 438-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԹԻՎ 231-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Պետական ուսումնական հաստատության» կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 6-րդ կետի 1)-ին ենթակետը և 7-րդ կետը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Շնողի Հ.Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոց» և «ՀՀ Լոռու մարզի Թեղուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի՝ միացյալ խորհրդի նախագահի 14.08.2023թ. գրությունը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 28.08.2023թ. թիվ 01/09.3/22235-2023 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

ՀՀ Լոռու մարզպետի 2021թ. մայիսի 10-ի «ՀՀ Լոռու մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների խորհուրդների կազմերը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 75-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 231-Ա որոշման 2-րդ հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

«38. «ՀՀ Լոռու մարզի Շնողի Հ.Մելիքսեթյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ» և «ՀՀ Լոռու մարզի Թեղուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ» մասում «Բոշյան Մանե» բառերը փոխարինել «Ավետիսյան Կարեն» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

28/08/2023

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. օգոստոսի 28
ք.Վանաձոր